Ռեկտոր Կորյուն Աթոյանի շնորհավորանքը ապրիլի 7-ի առիթով

Այսօր մեր երկրում Մայրության և գեղեցկության օրն է և Սուրբ Աստվածածնի Ավետման տոնը: Շնորհավորում եմ մեր բուհի կանանց և աղջիկներին՝ այս գարնանային տոնի առթիվ, որը հնարավորություն է տալիս վերստին արժևորելու մեր սիրելի մայրերի, կանանց, քույրերի ու դուստրերի դերակատարությունը մեր բոլորիս կյանքում, մեր ժողովրդի կյանքում: Մենք ձեզ ենք պարտական դաստիարակված ու կիրթ մեր աճող սերնդի համար, ընտանիքի ծուխն անշեջ պահելու համար: Դուք բազմաշնորհ եք, բարի, շրջահայաց, բանիմաց, հետևաբար որպես գործընկեր՝ բարեխիղճ ու կարգապահ:

Սիրելի տիկնայք և օրիորդներ, մաղթում եմ, որ ձեր կյանքում ընտանիքը՝ լի մանուկներով ու խինդով, լինի այն ամուր հենարանը, որը կօգնի ձեզ առաջ ընթանալ, նորանոր ձեռքբերումներ արձանագրել ու լինել միշտ գեղեցիկ:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Հարգանքով՝

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՀ, Երևան 0025, Նալբանդյան 128, Հեռ.՝ +37410 521720
Ֆաքս՝ +37410 528864, Էլ-փոստ՝ info@asue.am, www.asue.am